«Հաստատում եմ»

ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար _____ Ա.Մակարյան

«___»_____ 2020 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<u>«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ</u>

(Ուսումնական հաստատության անվանումը)

<u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Ք.ԻՋԵՎԱՆ, ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 3</u>

(Հաստատության հասցեն)

ԻՋԵՎԱՆ 2020

ՆԱԽԱԲԱՆ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են՝

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության այս ***հաշվետվությունը*** կազմվել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով: Հաշվետվությունը կազմված է **ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ՝** հաստատված Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների համաձայն:

Սույն ինքնավերլուծությամբ գնահատվել են բուհի մատուցած կրթական ծառայությունները և կրթական ծրագրերը (ՄԿԾ-ները) և հիմնավորվել է, թե նրանք որքանով են ծառայում նախանշված կրթական նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:

Ինքնավերլուծությունը նպատակ ունի բարելավելու մասնաճյուղի ՄԿԾ-ների որակը և համապատասխանությունը, ընդլայնելու մասնաճյուղի և կրթական ծրագրերի ներուժը, որոշումներ կայացնելու համար ապահովելու տեղեկատվական համապատասխան հիմքերով, նպաստելու ուսանողների ուսումնառության որակի բարելավմանը: Ինքնավերլուծության խնդիրն է հիմնավորել, որ ԵՊՀ ԻՄ-ն այնպիսի ուսումնական հաստատություն է, որը ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, ուսանողներին դաստիարակում է բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով, հասարակության ամենատարբեր շերտերին ընձեռում է մատչելի և ընտրության լայն հնարավորություններ, տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ ու բարենպաստ միջավայր և այլն:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ ԻՄ-Ի ՄԱՍԻՆ

ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում գործող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 1994թ.՝ Իջևանի տարածաշրջանային բազմաճյուղ քոլեջի բազայի վրա: Վերջինս ստեղծվել էր ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի՝ 1991թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ և կոչված էր ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում ակտիվացնել գիտամշակութային կյանքը, կասեցնել սահմանամերձ շրջաններից երիտասարդության արտահոսքը, պատրաստել խոր գիտելիքներով և բազմակողմանի ունակություններով օժտված, ազգային և համամարդկային մշակույթի ավանդներին նվիրված մասնագետներ:

1994թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության թիվ 440 որոշմամբ՝ Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվեց որպես Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, որը գործում է մինչև այսօր:

Իր 25-ամյա գործունեության ընթացքում ԵՊՀ ԻՄ-ը տվել է շուրջ 5000 շրջանավարտ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, պետական և հանրային կառույցներում, բանկային համակարգում և այլն: Մեկ տասնյակից ավել շրջանավարտներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, աշխատում են մասնաճյուղում:

Իր ռազմավարական նպատակների իրականացման շրջանակներում մասնաճյուղը միտված է տալու բարձրորակ կրթություն, աջակցելու տարածաշրջանի գիտական, մտավոր, կրթական, տնտեսական և մշակութային առաջընթացին, ստեղծելու տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր, տրամադրելու բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական խնդիրը համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումն է: Բուհում հետևողական աշխատանքներ են տարվում ուսումնագիտական գործընթացի, մասնավորապես՝ ուսումնական ծրագրերի ու պլանների կատարելագործման ուղղությամբ: Մասնաճյուղն իրականացում է ԵՊՀ ծրագրերին համապատասխան՝ առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրական կրթություն:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գերակա նպատակներից է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացումը տարածաշրջանում: Դրանից ելնելով՝ բուհում գործում է 4 ֆակուլտետ՝ Բնական գիտությունների, Հումանիտար գիտությունների, Տնտեսագիտության, Կիրառական արվեստի և 10 ամբիոն:

Բնական գիտությունների ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության) և իրականացնում է 3 կրթական ծրագիր («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Բնապահպանություն և բնօգտագործում»): Ֆակուլտետում գործում են Ընդհանուր ֆիզիկայի և մասնագիտական համակարգչային լաբորատորիաները:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետն ունի 4 ամբիոն (Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների) և իրականացնում է 7 կրթական ծրագրեր («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն»):

Տնտեսագիտության ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Ընդհանուր տնտեսագիտության, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության) և իրականացնում է 4 կրթական ծրագրեր («Տնտեսագիտության տեսություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Սերվիս», «Զբոսաշրջություն»):

Կիրառական արվեստի ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի, Գծանկարի, գունանկարի և քանդակի) և իրականացնում է 2 կրթական ծրագիր («Կիրառական արվեստ», «Դիզայն»):

Ֆակուլտետում գործում են 4 արվեստանոցներ՝ տեքստիլի, հագուստի մոդելավորման, խեցեգործության, քանդակի:

2006 թվականից մասնաճյուղում գործում է **Հեռակա ուսուցման բաժինը**, ուր իրականացվում է 5-ամյա բակալավրական կրթություն՝ 13 կրթական ծրագրերով («Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տնտեսագիտության տեսություն», «Սերվիս», «Ֆինանսներ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Քարտեզագրություն և կադաստրային գործ»):

Ներկայումս մասնաճյուղի 4 ֆակուլտետներում առկա ուսուցմամբ 15 կրթական ծրագրերում ուսանում է ավելի քան 500 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում 13 կրթական ծրագրերում սովորում է ավելի քան 1000 ուսանող:

ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների հետաքրքիր առօրյան (ուսումնագիտական, գիտակրթական, մշակութային, ժամանցային տարբեր միջոցառումներ և նախաձեռնություններ) ապահովում, նրանց իրավական գիտակցությանը, հայրենասիրական ոգու բարձրացմանը նպաստում են **ուսանողական ինքնակառավարման մարմինները՝** ուսանողական խորհուրդը (ՈԻԽ), ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ):

Մասնաճյուղն ունի ժամանակակից համակարգիչներով հագեցած 3 **համակարգչային լսարան**, 12500 միավոր և 1500 անուն էլեկտրոնային գրականությամբ **գրադարան**, որի մասն է կազմում նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովված հարմարավետ **ընթերցասրահը**:

2009 թվականից մասնաճյուղում գործում է **Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը**, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մրցունակության աճին, շրջանավարտների և մասնաճյուղի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը: